ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 24 2021 № 1

ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ИСКУССТВОВЕДЕНИЕ

ART STUDIES

ՀՏԴ՝ 781.7
DOI: 10.52971/18294316-2021.1-149

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հասմիկ Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Նվիրվում է Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակին

Բանալի բառեր՝ *Ալ. Սպենդիարյան, ժողովրդական երգ, աշուղական երգ, բանավոր արվեստ, մեկնաբանություն, տարբերակ:*

Իր ելույթներում ու հրապարակումներում, նաև իր որոնումներում Ալ. Սպենդիարյանը առանձնահատուկ ու բացառիկ կարևորություն է տվել հայ ժողովրդական երգերի ընկալմանն ու էության ճանաչմանը, սակայն նրա համար ստեղծագործական զարգացման ու լավագույն արդյունքների ձեռքբերման ոլորտ է հանդիսացել ժողովրդապրոֆեսիոնալ, հիմնականում աշուղական երաժշտարվեստը:

Կոմպոզիտորի ստեղծագործական տեսադաշտում են եղել քաղաքային ժողովրդական երգերի կատարումները, որոնք նա փոխադրել էր դաշնամուրի համար: Այս առումով հոդվածում առավելապես կարևոր նշանակություն է տրվում մեծ գումրեցու՝ կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանի հետ նրա ծանոթությանը: Հենց Ն. Տիգրանյանի շնորհիվ Ա.Սպենդիարյանին հասու դարձան Ալեքսանդրապոլի աշուղական երգերի ու գործիքային մուղամների դասական նմուշները, որոնք էական դերակատարում ունեցան նրա ստեղծագործության մեջ:

Նախաբան. Հայ դասական երաժշտության հիմնադիրներից մեկը՝ Ալ. Սպենդիարյանը, ապրեց և ստեղծագործեց որպես հարազատ ժողովրդի նվիրյալ զավակ, որպես, սևակյան բնորոշմամբ, ճիշտ ժամանակին եկած հանճար՝ ազգային դասական երաժշտության հիմնարկեքը դնելու պատմական առաքելությամբ:

Ժամանակի հոլովույթի մեջ դիտելով նրա ստեղծագործության դերն ու նշանակությունը, թերթելով 1920-ականների հայկական նորաստեղծ հանրապետության մշակութային տարեգրության էջերը՝ վերստին համոզվում ենք կոմպոզիտոր գործիչի՝ ի վերուստ ուղղորդված և լավագույնս իրականացրած պատմականությունը, կշիռն ու չափը:

Վերստին անդրադառնալով Ալ. Սպենդիարյանի ստեղծագործության ազգային հատկանիշներին, դրանց ձևավորման բարդ ու հետաքրքիր գործընթացի կարևոր հանգրվաններին, որոնք հնարավոր դարձան մի շարք նպաստավոր գործոնների համադրությամբ, այս հոդվածում առանձնացրել ենք այդ գործոններից մեկը՝ ավանդական աշուղական արվեստը՝ հիմնականում կոմպոզիտորի ալեքսանդրապոլյան գրառումներում:

Ի սկզբանե որպես XIX դարի ռուս առաջադեմ արվեստագետների և հատկապես «Հզոր խմբակի» գեղագիտական սկզբունքների հետևորդ՝ Ալ. Սպենդիարյանը մոտեցավ ճշմարիտ արվեստի ակունքներին: Դեռևս Հայաստան ոտք չդրած՝ նա զգաց, որ իր ոգեղեն թիրախը հայ ժողովրդական-ավանդական երաժշտության տիրույթում է: Ընտրեց ու սկսեց հաջողությամբ ծավալվել այդ տիրույթում:

Հայտնի է, որ 1916թ. Թիֆլիսում Ալ. Սպենդիարյանն ի մոտո ծանոթանում է Կովկասյան տարածաշրջանի ավանդական նվագարաններին ու նվագախմբերին: Որպես եվրոպական նվագարանային-նվագախմբային կատարողական արվեստի հմուտ գիտակ՝ նա հանդես է գալիս ելույթներով ու հրապարակումներով, որտեղ հստակ շարադրում է իր դատողությունները՝ այսպես կոչված, Արևելյան նվագախմբի լիակատար ու գունագեղ հնչողությանը նպաստող մի շարք արտահայտչամիջոցների մասին[1]:

Որպես սկզբունքային հիմնադրույթ՝ նա կարևորում է հետևյալը. արևելյան նվագախմբին սնուցող աղբյուր կարող է ծառայել միայն արևելյան ժողովրդական երգի բնօրինակը կամ էլ կոմպոզիտորական ստեղծագործությունը՝ հորինված խիստ ժողովրդական ոճով[2]:

Ինչպե՞ս էր կոմպոզիտորը հասել այս հիմնադրույթին, ի՞նչն էր նրան ուղղորդել:

1893-94թթ. Ալ.Սպենդիարյանի ստեղծագործական տեսադաշտում արդեն հայտնվել էին հայկական քաղաքային ժողովրդական երգերի կատարումները, որոնք նա փոխադրել էր դաշնամուրի համար: Սակայն կարևոր նշանակություն ունեցան նրա ծանոթությունն ու հետագա տարիների մտերմությունը մեծ գումբեցու՝ Նիկողայոս Տիգրանյանի հետ:

Արևելքի ժողովուրդների երաժշտության խոր գիտակ, կոմպոզիտոր, դաշնակահար Ն. Տիգրանյանն իր ստեղծագործական որոնումները սևեռեց հատկապես քաղաքային ժողովրդական և աշուղական երաժշտական նմուշների ուսումնասիրման, գրառման և բազմաձայն վերակերտման վրա: Հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրադրությունը և եվրոպական արժեքների նկատմամբ ազգային չա-

[1] **Спендиаров А. А.** О восточном оркестре // в кн. Г. Г. Тигранова "А. Спендиаров". Ереван. -1957. С. 177.

[2] Նույն տեղում, էջ 179:

փանիշների ընդհանուր մակարդակը՝ կոմպոզիտորի ստեղծագործությունը ժամանակին դիտարկվել է որպես առաջադեմ և վառ հեռանկարային։

Հայ երաժշտագիտության մեջ այս երաժշտապատմական ժամանակաշրջանը բաժանվում է մինչկոմիտասյան, կոմիտասյան և հետկոմիտասյան փուլերի։ Անշուշտ, սա հիմնավոր բաժանում է։ Սակայն որոշ փաստեր թույլ են տալիս նկատել յուրահատուկ ընդհանրություններ և սկզբունքային մոտեցումներ այս փուլերի սահմանագծերում։ Մասնավորապես, նկատի ունենք Կոմիտասի և Ն. Տիգրանյանի մոտեցումները ժողովրդական և մասնագիտացված երաժշտության հավաքման, գրառման և բազմաձայն մշակման ասպարեզում։ Դրան նպաստել են նրանց ստեղծագործական կապերը, անձնական մտերմությունը և նամակագրությունը։ Հայտնի է, որ Ալեքսանդրապոլ այցելելիս Կոմիտասը մշտապես հյուրընկալվել է Ն.Տիգրանյանի տանը, և նրանց միավորել է նաև ստեղծագործական աշխատանքը։ Այստեղ հատկապես կարևորում ենք կոմպոզիտոր և ժողովրդական ստեղծագործություն հարաբերությունը, որտեղ սկզբունքային նշանակություն ունեն ինչպես բնօրինակ նյութի հավաքման, այնպես էլ դրա բազմաձայն մշակման օրինաչափությունները։

Ժամանակին և այսօր էլ թե՛ կատարողների և թե՛ գիտակների շրջանում մեծ հետաքրքրություն են առաջացնում կոմպոզիտորի գրի առած և բազմաձայն մշակած մուղամները։ Դրանց երաժշտապատմական արժեքը չափազանց բարձր է. «Ն. Տիգրանյանի՝ մեծ «Արևելք երգողի» (Ալ. Սպենդիարով) ստեղծագործությունը մուղամաթի զարգացման ու տարածման մեջ հսկայական ներդրում է», - գրում է Լ. Երնջակյանը մի քանի նկատառումներով։ Հայտնի է, որ Ն. Տիգրանյանը դրանք գրառել է թառահար Ա. Մելիք-Աղամալյանի փայլուն կատարումներից։[3]

Կոմպոզիտորի գրի առած և բազմաձայն մշակած մուղամները մինչ օրս էլ որոշակի հետաքրքրություն են առաջացնում ինչպես երաժշտագետների, այնպես էլ կատարողների շրջանում։ Այս առումով ուզում ենք հենվել Կ. Խուդաբաշյանի մի արժեքավոր դրույթի վրա. «Ն. Տիգրանյանի մուղամների մշակումները ներկայումս չեն կատարվում (բացառություն է կազմում միայն «Շահնազ» մուղամի մշակումը ջութակի և դաշնամուրի համար, կատարված՝ կոմպոզիտորի կողմից)։ Բայց եթե մուղամների մշակումները կորցրել են իրենց գեղարվեստական արժեքը դաշնամուրային նվագացանկի և համերգային նյութի առումով, քանի որ ժամանակակից դաշնամուրային տեխնիկայի տեսանկյունից շատ պարզունակ են, ապա դրանք պահպանելու են իրենց արժեքը որպես նյութ՝ հետազոտողների և կոմպոզիտորների շատ սերունդների համար»։[4]

Այսպիսով, Ն. Տիգրանյանը՝ որպես հայ ավանդական երաժշտության փայլուն գիտակ, մեծ հետաքրքրություն էր պատճառում նաև իր համար հայ ազգային երաժշտությունը տակավին բացահայտող Ալ.Սպենդիարյանն։ Հետագայում յուրահատուկ փոխազդեցության ու փոխլրացման ճանապարհով ընթացան երկու հայ երաժիշտների մերձեցումն ու ստեղծագործական համագործակցությունը։ Համոզված ենք, որ հենց Ն.

[3] **Երնջակյան Լ.**, Հայ մուղամաթիստները և նրանց դերը Արևելյան երաժշտական մշակույթի զարգացման մեջ // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1982, N2, էջ 47:

[4] **Худабашян К.** Армянская музыка на пути от монодии к многоголосию. Ереван. -1978. С. 88.

Տիգրանյանի հետ ստեղծագործական առնչակցությունն էլ մի կողմից կողմնորոշեցին Ալ. Սպենդիարյանի ազգային-ոճական որոնումները, մյուս կողմից էլ՝ պարզապես նրա ստեղծագործական խառնվածքի մեջ առանձնահատուկ տեղ ունեին նվագարանային երաժշտության ժանրերն ու կատարողական առանձնահատկությունները:

Հիշենք, որ վերջինիս հմուտ գիտակն ու ջատագովն էր Ն. Տիգրանյանը, որի տեսադաշտում մշտակայուն տեղ էր զբաղեցնում հիմնականում հայ աշուղական-սազանդարական արվեստի ավանդույթների թե՛ ուսումնասիրությունը և թե՛ յուրացումը: Ինքը՝ Ալ. Սպենդիարյանը, Գումրեցու գրքի առաջաբանում խոստովանում է, որ խորապես տպավորվել ու ազդվել է նրա դաշնամուրային մանրանվագներից: Ավելին, նա իր ստեղծագործական արևելյան կողմնորոշման մեջ հենց Ն. Տիգրանյանի ստեղծագործություններն է համարում առավել մոտ ու հարազատ:[5]

Ասվածի լավագույն վկայությունները սփռված են նրանց նամակներում և այսօր էլ հիացնում են ընթերցողին մարդկային ջերմ զգացմունքայնությամբ, ստեղծագործական տարբեր խնդիրների արծարծմամբ ու դրանց ինքնօրինակ լուծումներով:

Ընդհանրացնելով դրանց բովանդակությունը՝ տեսնում ենք, որ այստեղ հիմնանյութը վերաբերում է ավանդական պրոֆեսիոնալ երաժշտության ժանրերին ու արտահայտչամիջոցների նորովի յուրացմանը: Խոսքը տարվում է «Ալմաստ»-ի, «Երևանյան էտյուդներ»-ի հորինվածքային առանձնահատկությունների և նվագախմբային նոր հնարքների՝ կյանքի կոչման խնդիրների շուրջ: Այսպես, 1925թ. հուլիսի 6-ին նա Յալթայից գրում է Ն. Տիգրանյանին. «Ես իրոք ուզում եմ գալ Լենինական, հիմնականում Ձեզ տեսնելու համար, բայց դա հազիվ թե հնարավոր լինի սեպտեմբերից առաջ: Ես հաճույքով պատրաստ եմ գործիքավորման իմ գիտելիքները ի սպաս դնել Ձեզ:

1916թ. Թիֆլիսում ծանոթացա Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմին և որոշեցի պոեմն օգտագործել որպես օպերայի սյուժե»:[6]

Ալ. Սպենդիարյանի համար Ն. Տիգրանյանի ստեղծագործությունը երկակի հետաքրքրություն էր ներկայացնում. նկատի ունենք նախ՝ սազանդարների ավանդական երաժշտությունը, ապա՝ կոմպոզիտորի մշակումներում դրսևորված մոտեցումները բնօրինակ մուղամների ու պարեղանակների հանդեպ: Ա. Սպենդիարյանը բազմիցս հիացել էր հայտնի թառահար Աղամալ Մելիք-Աղամալյանի կատարած մուղամներով, որոնք հիմնականում գրի էր առել Ն. Տիգրանյանը: Ալ. Սպենդիարյանը նկատում է. «Նրա գրի առած մեղեդիներին բարձր արժեք են հաղորդում գեղարվեստական նուրբ ճաշակով կատարված ընտրությունը, նրանց բոլոր առանձնահատկությունների ճիշտ ընկալումը և ճշգրիտ գրանցումը, որ ժամանակին արժանացել է Ա.Մելիք-Աղամալյանի նման գիտակի լիակատար հավանությանը: Մեղեդիների արժեքին համապատասխան է նրանց հարմոնիկ հարդարումը, ինչպես նաև Նիկոլայ Ֆադեևիչի մշակումների ողջ

[5] **Гумреци**, Николай Фаддеевич Тигранов и музыка Востока, с предисловиями Н.Я. Марра и композитора А. А. Спендиарова. Ленинград. -1927. С. 4.

[6] Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին, Երևան, 1960, էջ 169-170:

ֆակտուրան, որ այդ մշակումները դարձնում է համերգային էստրադաների հետաքրքրքական նվաճումը»:[7]

Ինքը՝ Ալ. Սպենդիարյանը, Ն. Տիգրանյանի օրինակով մշտապես գրի է առել թառահարների, քամանչահարների, դուդուկահարների կատարումներից: Նույնիսկ ժամանցների ու հավաքույթների ընթացքում նա լիովին տրվել է ավանդական եղանակների հմայքին: Հովհ. Հովհաննիսյանի տանը կազմակերպված երեկույթների ընթացքում դա նույնպես ակներև էր. «Հյուրերը նստում էին գորգին, - հիշում է Ն. Տիգրանյանը, - և սկսվում էր աշխույժ զրույց, որին չէր մասնակցում միայն Ալ. Սպենդիարովը՝ անտարբեր ամեն ինչի նկատմամբ, բացի «Դուն էն գլխեն»-ից, որը թառի նվագակցությամբ երգում էր քեֆի մասնակիցներից մեկը»:[8]

Հիշենք նաև «Էնզելի»-ի գրառումը՝ հայտնի թառահար, Արևելյան նվագախմբի ղեկավար Ա. Ալեքսանդրյանի կատարմամբ, կամ «Հիջաս»-ը՝ աշուղական գրասենյակում՝ սազանդարների շրջապատում, նարդու կատաղի պայքարից հետո: Երաժիշտներից շատերին նա ուղղակի ստիպել է սովորել կոնսերվատորիայում: Նրանք նշում են, որ կոմպոզիտորը հատկապես իր համար կարևորել է կատարվող ստեղծագործությունների ռիթմի ճշգրիտ ընկալումն ու զգացողությունը:

Ինչպես Լենինականում ու Երևանում էր, կրկնվում է նաև Թիֆլիսում: Այստեղ Հայկական երաժշտական ընկերությունը Հովհաննես Թումանյանի ղեկավարությամբ համերգների ու հանդիպումների շարք է կազմակերպում Ալ.Սպենդիարյանի ներկա գտնվելու առիթով՝ այն վերածելով յուրահատուկ տոնի:

«Այս երեկոյին ելույթ ունեցան, - հիշում է բանաստեղծի դուստրը, - Սայաթ-Նովայի անվան աշուղական երգի անսամբլը, սազանդարների խումբը, սանթուրահարների փոքրիկ անսամբլը, դուդուկահարներ, քամանչահարներ: Վերջում Մ.Աղայանը կատարեց «Անտունի»-ն ու «Դուն էն գլխեն»-ը: Հիացած Սպենդիարովը որոշ մոտիվներ գրի առավ: Հաջորդ օրը Սպենդիարովի եղբոր տանը դարձյալ հանդես եկան աշուղներ, որոնց կոմպոզիտորը շարունակ կատարել էր տալիս իրեն դուր եկած երգերը նորից ու նորից… Չբավարարվելով դրանով՝ նա թափառում էր Թիֆլիսում, հին թաղամասերում այցելում էր սրճարաններ, որպեսզի բնական միջավայրում ունկնդրի աշուղներին: Նրան ուղեկցում էր Ռ. Մելիքյանը»:[9]

Այս հանդիպումներից մեկի ընթացքում էլ կոմպոզիտորը ծանոթանում է աշուղ Շերամի հետ, հիանում է նրա երգերի ինքնօրինակ կերտվածքով և հորդորում է աշուղին և նրա որդուն՝ Վարդգես Տալյանին, գրի առնել նրա երգերը:[10]

Ի վերջո, հիշենք նաև, որ հենց «Թմկաբերդի առումն» էլ աշուղական պատում էր, ինչը այնքան տպավորվել էր կոմպոզիտորի մեջ և ոգեշնչել նրան:

---

[7] Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին, էջ 58-59:

[8] **Սպենդիարովա Մ**., Ա. Սպենդիարով, Երևան, 1966, էջ 179:

[9] **Тигранов Г. Г.** А. Спендиаров. Ереван. -1957. С. 142.

[10] Հարությունյան Հ. Հ., Աշուղ Շերամը և Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Ñ. 10, Գյումրի, 2007, էջ 94:

Եզրահանգում. Ամփոփելով հայրենի երկրում Ալ. Սպենդիարյանի ստեղծագործական որոնումների շուրջ մեր դիտարկումները՝ կարող ենք նշել հետևյալը. թե՛ իր ելույթներում ու հրապարակումներում, թե՛ իր որոնումներում Ալ.Սպենդիարյանը առանձնահատուկ ու բացառիկ կարևորություն է տվել ժողովրդական երգերի լիարժեք ընկալմանն ու էության ճանաչմանը, սակայն նրա համար ստեղծագործական յուրացման ու լավագույն արդյունքների ձեռքբերման ոլորտը ավանդական պրոֆեսիոնալ երաժշտարվեստն էր՝ աշուղական երգն ու սազանդարական նվագը: Ակնհայտ է, որ այստեղ ալեքսանդրապոլյան նմուշները բացառիկ կարևոր դեր կատարեցին: Հիշենք նաև, որ կոմպոզիտորը կյանքից շուտ հեռացավ, և իր իսկ խոսքերով ասած՝ ժողովրդական երգի իմացական խորքերին հասնելու համար իրեն դեռ շատ ուղիներ էին սպասում: Մի առիթով նա ասել է Մ. Միրզոյանին. «Այ, երբ ես կգրեմ իմ երկրորդ օպերան, դա բոլորովին ուրիշ բան կլինի»:[11]

ТРАДИЦИОННАЯ МУЗЫКА АЛЕКСАНДРОПОЛЯ В ТВОРЧЕСТВЕ АЛЕКСАНДРА СПЕНДИАРЯНА

Арутюнян А. А.

Ключевые слова: *Ал. Спендиарян, народная песня, ашугская песня, устная традиция, интерпретация, вариант.*

В своих выступлениях и публикациях, а также в своих исканиях Ал. Спендиарян придал особое и исключительное значение восприятию и познанию сути армянских народных песен. Но для творческого освоения и значительного достижения для композитора стала сфера народно-профессиональной, в основном ашугской музыки.

В творческом поле зрения композитора в основном были исполнения городских народных песен, которые он переложил для фортепиано. Особо важным стало его знакомство с выдающимся Гумреци – Никогаесом Тиграняном. Именно благодаря ему Ал. Спендиарян досканально познакомился с ашугскими песнями и классическими инструментальными мугамами Александрополя, которые сыграли важную роль в его творчестве.

TRADITIONAL MUSIC OF ALEXANDRAPOL IN ALEXANDER SPENDIARYAN'S PIECE OF ART

Harutyunyan H. H.

Key words: *Al.Spendiaryan, folk song, ashough song, oral tradition, interpretation, variant.*

In his speeches and publications, as well as in his research, A. Spendiaryan gave a special and unique opportunity to the perception and recognition of the essence of Armenian folk songs, for him the field of creative mastery and achieving the best results was folk-professional music, mainly ashough music.

[11] Ժամանակակիցները Ա. Սպենդիարյանի մասին, Երևան,1960, էջ 127:

The composer's creative sphere included performances of urban folk songs, which he rendered for the piano. His acquaintance with composer Nikoghayos Tigranyan (born in Gyumri) was of great importance. It was thanks to him that A. Spendiaryan gained access to the classical samples of Shirak ashough songs and instrumental mughams, which played a significant role in his work.

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. Երնջակյան Լ., Հայ մուղամաթիստները և նրանց դերը Արևելյան երաժշտական մշակույթի զարգացման մեջ // Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան,1982:
2. Սարյան Ա., Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստը. 19-20–րդ դարեր // Հայ ազգագրություն և բանահյուսություն, N 4, Երևան, 1973:
3. Ժամանակակիցները Ա.Սպենդիարյանի մասին, Երևան, 1960:
4. Հարությունյան Հ.Հ., Աշուղ Շերամը և Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Ñ. 10, Գյումրի, 2007:
5. Սպենդիարովա Մ., Ա.Սպենդիարով, Երևան, 1966:
6. Տիգրանյան Ն., Հոդվածներ, հուշեր, նամակներ, Երևան, 1981:
7. Атаян Р. Об изучении мугамов в Армении//в сб. Макомы, мугамы и современное композиторское творчество (межреспубликанская научно–теоретическая конференция). Ташкент.-1978.
8. Гумреци, Николай Фадеевич Тигранов и музыка Востока, с предисловиями Н.Я. Марра и композитора А. А. Спендиарова. Ленинград. -1927.
9. Тигранов Г.Г. А. Спендиаров. Ереван. -1957.
10. Спендиаров А. А. О восточном оркестре //в кн. Тигранов Г. Г. «А. Спендиаров». Ереван. -1957.
11. Худабашян К. Армянская музыка на пути от монодии к многоголосию. Ереван. -1978.

Ընդունվել է՝ 15. 05. 2021
Գրախոսվել է՝07. 06. 2021
Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին
Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, էլ հասցե՝ hasmik.har@mail.ru